# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ N 161-Ա**

<<25>> դեկտեմբերի 2025 թվական քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՐՋԻՆ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դրույթով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի վերջին՝ 2025 թվականի դեկտեմբերի 25-ին ժամը 1530-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում կայանալիք ավագանու նիստի հետևյալ օրակարգը՝

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՐՋԻՆ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐՁԸ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

/Զեկուցող՝ Անի համայնքի ավագանու անդամ, <<Քաղաքացիական պայմանագիր

կուսակցության>> խմբակցության ղեկավար՝ Էդիկ Ուռուտյան/

4)ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ՝ 12 դեմ՝ ձեռնպահ՝

ԺԻՐԱՅՐ ԱԼԵՔՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ՄՈՒՐԱԴ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԶԱՏԻԿՅԱՆ

ԳԱԳԻԿ ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

ԳԱԳԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆ

ԷԴԻԿ ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԱԳԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<25>> դեկտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 162-Ն**

<<25>> դեկտեմբերի 2025 թվական          քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի, 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով.

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2026 թվականի բյուջեն և բյուջետային ուղերձը՝ համաձայն N N 1-5 հավելվածների:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 5-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ՝ 12          դեմ՝          ձեռնպահ՝

ԺԻՐԱՅՐ ԱԼԵՔՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ՄՈՒՐԱԴ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ՉԱՏԻԿՅԱՆ

ԳԱԳԻԿ ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

ԳԱԳԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆ

ԷԴԻԿ ՈՒՌՈՒՅԱՆ

ԳԱԳԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<25>> դեկտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 163-Ն**

<<25>> դեկտեմբերի 2025 թվական քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 181-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ՝ 12 դեմ՝ ձեռնպահ՝

ԺԻՐԱՅՐ ԱԼԵՔՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ՄՈՒՐԱԴ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ՋԱՏԻԿՅԱՆ

ԳԱԳԻԿ ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

ԳԱԳԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆ

ԷԴԻԿ ՌՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԱԳԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<25>> դեկտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու 2025 թվականի
դեկտեմբերի 25-ի թիվ N163-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 181-Ն որոշման N N 1-3 հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Համայնքի բյուջեի եկամտային մասի 7332 (Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (Սուբվենցիաներ) տողի «69182.5» թիվը փոխարինել «297165.7» թվով:
2. Համայնքի բյուջեի եկամտային մասի 7452 (Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ) տողի «3761.0» թիվը փոխարինել « 3798.7» թվով:
3. Համայնքի բյուջեի եկամտային մասի 7452 (Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ) տողի «184273,0» թիվը փոխարինել « 184163,3» թվով:
4. Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 02, դաս 01 (Գյուղատնտեսություն) և տնտեսագիտական դասակարգման 4729 (Այլ նպաստներ բյուջեից) հոդվածի «184273,0» թիվը փոխարինել «184163.3» թվով:
5. Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 05, դաս 01 (Սուբվեն Ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի «0» թիվը փոխարինել «181112.1» թվով, 5134 (Նախագծահետազոտական ծախսեր) հոդվածի «0» թիվը փոխարինել «1932.8» թվով:

6. Գործառական դասակարգման բաժին 06 խումբ 03, դաս 01 (Սուբվեն Ջրամատակարարում) և տնտեսագիտական դասակարգման 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի «81082.1» թիվը փոխարինել «101408,7» թվով:
7. Գործառական դասակարգման բաժին 06. խումբ 01, դաս 01 (Սուբվեն Բնակարանային շինարարություն) և տնտեսագիտական դասակարգման 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածի «0» թիվը փոխարինել «24124.0» թվով, 5134 (Նախագծահետազոտական ծախսեր) հոդվածի «0» թիվը փոխարինել «487.7» թվով:
8. Գործառական դասակարգման բաժին 09. խումբ 01, դաս 01 (Նախադպրոցական կրթություն) և տնտեսագիտական դասակարգման 4511 (Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) հոդվածի «122303.6» թիվը փոխարինել «122341.3» թվով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ**
**ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ**

---

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

<<25>> դեկտեմբերի 2025 թ. քաղաք Մարալիկ

2025 թվականի դեկտեմբերի 25-ին, ժամը 15:30-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի ավագանու նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստը:

**Նիստը վարում էր Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանը:**

**Նիստն արձանագրում էր Անիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հարություն Համբարյանը**

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 18-ի N 7-Ա որոշման և համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն, Անի համայնքի ավագանու նստաշրջանների գումարման համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման օր է սահմանված յուրաքանչյուր ամսի վերջին հինգշաբթի օրը, այսինքն այսօր՝ դեկտեմբերի 25-ին:

Տեղեկացվեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի համաձայն, ավագանու հերթական նիստից մեկ շաբաթ առաջ հրապարակվել է ավագանու այսօրվա նիստի օրակարգը, նշվել է նիստի անցկացման վայրը և ժամանակը: Այդ տեղեկությունները փակցվել են համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում, տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, տեղադրվել են մարզպետարանի, համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքերում և հրապարակային ծանուցումների www.Azdarar.am կայքում:

Նիստի օրակարգում ընդգրկված որոշումների նախագծերը և դրանց կից փաստաթղթերը մեկ շաբաթ առաջ տրամադրվել են ավագանու անդամներին և տեղադրվել համայնքի պաշտոնական կայքում:

Հայտարարվեց, որ Անի համայնքի ավագանու 21 անդամներից, համայնքի ավագանու հերթական նիստին մասնակցում են ավագանու 12 անդամներ՝

<<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու 9 անդամները՝

**ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ**

**ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ**

**ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆԸ**

**ԷԴԻԿ ՈՒՌՈՒՏՅԱՆԸ**

**ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆԸ**

**ՀԱՍՄԻԿ ՋԱՏԻԿՅԱՆԸ**

**ԺԻՐԱՅՐ ԱԼԵՔՅԱՆԸ**

**ԳԱԳԻԿ ԹԱԹԵՎՈՍՅԱՆԸ**

**ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆԸ:**

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ավագանու անդամներ՝

**ԳԱԳԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԸ**

**ԳԱԳԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԸ:**

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու անդամ՝

**ՄՈՒՐԱԴ ԱՍԼԱՆՅԱՆԸ:**

**<<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ** ավագանու անդամ **ՆԱԻՐԱ ՍԱՐՈՅԱՆԸ** նիստից բացակայում էր հարգելի պատճառով /բացակայություն Հանրապետությունից/:

Անհարգելի կարգով բացակայում էին՝

<<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու անդամ՝ **ԳՈՌ ԱՂԱԲԵԿՅԱՆԸ:**

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ավագանու անդամներ՝

**ԶՈՀՐԱԲ ԴԱՎԹՅԱՆ**

**ՄԱՆՅԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

**ԴԱՎԻԹ ԹՈՐՈՍՅԱՆ**

**ՑՈԼԱԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

**ԱՆՈՒՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու անդամ՝ **ՆԱՐԵԿ ԱՍԱՏՐՅԱՆԸ :**

<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու անդամ՝ **ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԻԿՈՅԱՆԸ:**

Հայտարարվեց, որ բացակայություններով հանդերձ, ավագանու նիստի քվորումը ապահովված է, համայնքի ավագանու հերթական նիստը հայտարարվեց բացված:

Հնչեցվեց Հայաստանի Հանրապետության պետական Օրհներգը:

Նիստը վարողը ներկայացրեց համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգի նախագիծը և առաջարկություն ներկայացրեց օրակարգի նախագծում ընդգրկել հետևյալ հարցը՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**, որը վերաբերվում է համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություն կատարելուն:

Հարցը օրակարգում ընդգրկելու անհրաժեշտությունը հիմնավորվեց նրանով, որ սուբվենցիոն ծրագրի շրջանակներում համայնքում իրականացված ճանապարհաշինարարական աշխատանքների համար պետության կողմից հատկացվում է իր մասնաբաժինը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ներկայացված առաջարկությունն ընդունվեց:

**<u>ԼՍԵՑԻՆ-1</u>**

***1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՐՋԻՆ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դրույթով.

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի վերջին՝ 2025 թվականի դեկտեմբերի 25-ին ժամը $15^{30}$-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում կայանալիք ավագանու նիստի հետևյալ օրակարգը՝

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՐՋԻՆ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐՁԸ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ.

/Զեկուցող՝ Անի համայնքի ավագանու անդամ, <<Քաղաքացիական պայմանագիր կուսակցության>> խմբակցության ղեկավար՝ Էդիկ Ուռուտյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ժ. ԱԼԵՔՅԱՆ
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ
Հ. ՉԱՏԻԿՅԱՆ
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ
Գ. ՊՈՂՈՍՅԱՆ
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
Մ. ԵՆՈՔՅԱՆ
Մ. ԱՍԼԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 161-Ա)*

***Օրակարգ-2***

***2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ ԵՎ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ)***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի, 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2026 թվականի բյուջետային ուղերձը և բյուջեն՝ համաձայն N N 1-5 հավելվածների:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 5-ից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ժ. ԱԼԵՔՅԱՆ
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ
Գ. ՊՈՂՈՍՅԱՆ
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
Մ. ԵՆՈՔՅԱՆ
Մ. ԱՍԼԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 162-Ն)*

Հավելվածները կցվում են արձանագրությանը:

---

***Օրակարգ-3***

***3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐՁԸ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ.***

*(Զեկ. Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ)*

*ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁԸ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին արձանագրում է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու համայնքի բնակչությանը ուղղված ուղերձը՝ ամանորի և սուրբ ծննդյան տոների կապակցությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետով հաստատված ուղերձը հրապարակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի պաշտոնական ինտերնետային կայքում և լրատվության այլ միջոցներով

3. Սույն արձանագրությունը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***3. Քվեարկության արդյունքները.***

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ժ. ԱԼԵՔՅԱՆ
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ
Հ. ԶԱՏԻԿՅԱՆ
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ
Գ. ՊՈՂՈՍՅԱՆ
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
Մ. ԵՆՈՔՅԱՆ
Մ. ԱՍԼԱՆՅԱՆ

Ուղերձն ընդունված է. *(Արձանագրություն N 1)*

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 25-ի ուղերձի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐՁԸ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Սիրելի՛ անեցիներ, հարգարժան ներկաներ,

Սրտանց շնորհավորում ենք Ձեզ՝ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առիթով: Տոնացույցի մեջ Ամանորն այն եզակի տոներից է, երբ շատերն անկեղծորեն հավատում են հրաշքի և վստահ են, որ այն կարող է իրականանալ:

Տարվա այս ժամանակահատվածը ոչ միայն անցնող տարին ամփոփելու, այլ նաև գալիք տարում համայնքում իրականացվելիք ծրագրերի ու աշխատանքների, այդ թվում բնակավայրերի համաչափ զարգացման կարողություններն ու հնարավորությունները գնահատելու և սպասվող արդյունքները նախանշելու մասին է:

2025 թվականը լի էր դժվարություններով, խոչընդոտներով, միևնույն ժամանակ ձեռքբերումներով և հաղթանակներով:

Մեր հավաքական ուժի, որդեգրած սկզբունքի՝ այն է՝ աշխատանքի նկատմամբ պատասխանատվության ու հետևողականության շնորհիվ ապացուցեցինք, որ միասին կարող ենք լուծել համայնքում ծառացած և հրատապ լուծում պահանջող մի շարք խնդիրներ: Կարճ ժամանակահատվածում իրականացվեցին միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների ու փողոցների հիմնանորոգման, ջրատնտեսական համակարգերի կառուցման, լուսավորության ցանցի ընդլայնման և ենթակառուցվածքների արդիականացման աշխատանքներ: Բարերարների ներդումներով և համայնքի գործուն աջակցությամբ Մարալիկ քաղաքում կառուցվեց ժամանակակից չափորոշիչներին համապատասխան խաղահրապարակ, քաղաքային հրապարակի հարակից տարածքում տեղադրվեց Բագրատունյաց տոհմի նշանավոր արքա Աշոտ Ողորմածի և թագուհի Խոսրովանույշի քարակերտ արձանները, իսկ Գուսանագյուղ բնակավայրում տեղադրվեց զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձան:

Համայնքի բյուջեի միջոցներով վերանորոգվել և արդիականացվել են համայնքապետարանի, Ձորակապ, Լանջիկ, Գուսանագյուղ, Աղին և Լուսաղբյուր բնակավայրերի վարչական շենքերը, համայնքային ենթակայության երաժշտական, արվեստի, մարզադպրոցի շենքերը, համալրվել են նոր գույքով և հանդերձանքով:

Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվել է Սառնաղբյուր բնակավայր տանող ճանապարհի 1300 գծամետր հատվածի, Սարակապ բնակավայր տանող ճանապարհի 1500 գծամետր հատվածի և Հայկաձոր բնակավայր տանող ճանապարհի 1500 գծամետր հատվածի ասֆալտապատման աշխատանքներ, որի արժեքը կազմել է 402 մլն. 200 հազար ՀՀ դրամ: Սուբվենցիոն ծրագրերի

շրջանակներում ավարտական փուլում է Մարալիկ քաղաքի Հրանտ Շահինյան փողոցի 520 գծամետր հատվածի ասֆալտապատման աշխատանքները, որի արժեքը կազմել է 249,1 մլն ՀՀ դրամ: Պետական ծրագրի շրջանակներում ասֆալտապատվել է Ձիթհանքով-Ջարինջա միջբնակավայրային ճանապարհը:

Մարալիկ քաղաքի բնակֆոնդի պահպանման ուղղված ծրագրերի համատեքստում Մարալիկի 2-րդ թաղամասում իրականացվել են 1-ին, 2-րդ, 4-րդ և 6-րդ բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքները, որի արժեքը կազմել է 64 մլն. 231 հազար ՀՀ դրամ:

Սուբվենցիոն ծրագրի շրջանակներում իրականացվել են Մարալիկ քաղաքի Շիրակացի, Կոլտնտեսականների փողոցների, Շիրակացի 1-ին, 2-րդ, Կոլտնտեսականների 3,4,5,6,7-րդ նրբանցքների կոյուղագծերի կառուցման աշխատանքները, որի ընդհանուր երկարությունը կազմում 4300 գծամետր, որի արժեքը կազմել է 104 մլն. 900 հազար ՀՀ դրամ: Ավարտական փուլում են Սարակապ բնակավայրի խմելու ջրի համակարգի կառուցման և Բագրավան բնակավայրից Անիավան և Անիպեմզա բնակավայրերի խմելու ջրատարի կառուցման աշխատանքները, որի ընդհանուր արժեքը կազմում է 98 մլն. 736 հազար ՀՀ դրամ:

Էապես բարելավվել է համայնքում սանմաքրման աշխատանքները, տեղադրվել են նորաոճ աղբամաններ և ընդլայնվել են համայնքի բնակավայրերի աղբահանության ծավալները:

Շնորհիվ Ձեր վստահության, աջակցության և նվիրվածության մենք կարողացանք ևս մեկ քայլով մոտենալ մաքուր և բարեկարգ, առավել ապահով ու հարմարավետ համայնք ունենալու մեր որդեգրած տեսլականին: Համոզված ենք, որ նույն անաչառությամբ և նվիրումով շարունակելու ենք աշխատել 2026 թվականին:

Ուրախությամբ պետք է փաստենք, որ 2026 թվականին հրատապ լուծում պահանջող ծրագրերի իրականացման շրջանակներում ՀՀ կառավարության կողմից Անի համայնքին կհատկացվեն զգալի դրամական միջոցներ, որոնք կնպատակակուղղվեն ճանապարհաշինական ոլորտի աշխատանքների իրականացմանը, իսկ համայնք-պետություն համաֆինանսավորմամբ սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար նախատեսվում է կատարել շուրջ 1,5 մլրդ դրամի ներդրում, որի զգալի մասը կուղղվի համայնքում ենթակառուցվածքների զարգացմանը, մշակութային և սպորտային կյանքի ակտիվացմանը:

Պետական ծրագրի շրջանակներում 2025 թվականի գարնանը սկսվել են Անի համայնքի Շիրակավան և Ջրափի բնակավայրերում 288 աշակերտ/տեղ հզորության հանրակրթական նոր դպրոցների, Մարալիկ քաղաքում 150 տեղ հզորության և Քարաբերդ բնակավայրում 50 տեղ հզորության մանկապարտեզների կառուցման աշխատանքները: Նույն ծրագրի շրջանակներում 2026 թվականին կմեկնարկի Սառնաղբյուր բնակավայրում 567 աշակերտ/տեղ հզորության հանրակրթական նոր դպրոցի կառուցումը:

Պետական ծրագրի շրջանակներում 2026 թվականին նախատեսվում է վերանորոգել Մարալիկի ֆուտբոլի մարզադաշտը, Մարալիկի մշակույթի տունը, Մարալիկի թիվ 1 հանրակրթական դպրոցը, Բագրավանի հանրակրթական դպրոցը, Սառնաղբյուրի մանկապարտեզը, իսկ Ձորակապի միջնակարգ դպրոցի համար կկառուցվի նոր

մարզադահլիճ:

<u>**Սուբվենցիոն ծրագրի շրջանակներում 2026 թվականին կասֆալտապատվեն՝**</u>

- Ձիթհանքով բնակավայրի ներբնակավայրային 3-րդ փողոցի 700գծ. մետր երկարության հատվածը.
- Մարալիկ քաղաքի ներբնակավայրային Երիտասարդական փողոցի 762 գծ. մետր երկարության հատվածը.
- Լանջիկ բնակավայր մտնող կենտրոնական 1-ին և 2-րդ փողոցների 1348 գծ. մետր երկարության հատվածը.
- Սառնաղբյուր բնակավայր տանող ճանապարհի 1024 գծ. մետր հատվածը և ներբնակավայրային թիվ 9 փողոցի 796 գծ. մետր հատվածը.
- Շիրակավան բնակավայր մտնող ճանապարհի 461 գծ. մետր երկարության հատվածը:

Համայնքապետարանը նախաձեռնել է նաև պետական ծրագրի շրջանակներում ՀՀ Շիրակի մարզի <<Ղազանչի>> կոչվող ջրաղբյուրից Անի համայնքի սահմանամերձ գոտու 10 բնակավայրերի համար /Շիրակավան-Անիպեմզա/ ինքնահոս եղանակով խմելու ջրի նոր ջրատարի կառուցման գործընթաց:

Համայնքապետարանը նախաձեռնել է նաև բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի բարեկարգման, լուսավորության համակարգերի ընդլայնման, կանաչապատ տարածքների և հանգստի նոր գոտիների հիմնման գործընթացներ:

**Անիի համայնքապետարանը ակտիվ համագործակցել է նաև միջազգային գործընկերների ու տարբեր հասարակական բարեգործական կազմակերպությունների հետ, նրանց կողմից իրականացվել են մի շարք ներդրումային ծրագրեր, դրանք են՝**

**1. ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր (ՊՀԾ)**

Ծրագրի միջոցով ինտենսիվ մրգատու այգիներ են հիմնվել Մարալիկի թիվ 1, Գուսանագյուղի և Քարաբերդի հանրակրթական դպրոցների բակային տարածքներում:

**2. «ԴԻԱԿՈՆԻԱ» բարեգործական կազմակերպություն՝**

- Համայնքի սոցիալապես անապահով 1000 ընտանիքներ ստացել են 25 կգ-ոց սննդի փաթեթներ.
- Համայնքի 3-16 տարեկան 270 երեխաներ և պատանիներ ստացել են տաք հագուստ.
- Համայնքի 400 ընտանիքներ ստացել են վառելափայտ.

<u>**2. <<IWAY>> միջազգային կազմակերպություն՝**</u>

Մարալիկ քաղաքում իրականացվող «Շարժական երիտասարդական աշխատանք» ծրագրի երիտասարդներին նվիրվել են 20 աթոռ, 5 սեղան, լուսանկարչական ապարատ, պրոյեկտոր, որի ընդհանուր արժեքը կամզել է 1 մլն. ՀՀ դրամ:

**3. «Դեպի Հայք» կազմակերպություն.**

Համագործակցության արդյունքում կազմակերպությունը համայնքապետարանի համաֆինանսավորմամբ վերանորոգել է Մարալիկի Արվեստի դպրոցի դասասենյակները, որի ընդհանուր արժեքը կազմել է 5. մլն. ՀՀ դրամ.

**4. «Հայ Դպրոց» հիմնադրամ.**

Ծրագրի շրջանակում Մարալիկի Արվեստի դպրոցին հատկացվել է 20 դասասեղան, 30 աթոռ, 10 պահարան, 7 ուսուցչական սեղան և 3 գրատախտակ:

Մարալիկի թիվ 2 միջնակարգ դպրոցին հատկացվել է 13 գրատախտակ, 13 ուսուցչական սեղան և աթոռներ:

**5. <<ՇԵՆ>> բարեգործական կազմակերպություն և Ֆրանսիական «ԱՅՈ» կազմակերպություն.**

Համագործակցության արդյունքում վերանորոգվել է Ջրափիի մշակույթի տանը տեղակայված նկարչական խմբակի սենյակները, որի ընդհանուր արժեքը կազմել է 5 մլն ՀՀ դրամ. իսկ Անիի համայնքապետարանի համաֆինանսավորումը կազմել է ծրագրի արժեքի 20%-ը:

**6. <<ԷՅ ԹԻ ՓԻ>> բարեգործական հիմնադրամ**

Համագործակցության արդյունքում ձեռք է բերել շուրջ 2000 ծառ և տնկի:

**7 . ՄԱԶԾ «Կանայք քաղաքականության, հանրային կառավարման և քաղաքացիական հասարակության մեջ»**

Ծրագրի շրջանակներում հայտարարված դրամաշնորհային մրցույթին, Անի համայնքի ղեկավարին կից Կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի անդամների կողմից ներկայացվել է «Բնակիչների մասնակցության խթանումը էլեկտրոնային կառավարման միջոցով» ծրագիրը, որի ընդհանուր արժեքը կազմել է 10 000 €: Անիի համայնքապետարանի ֆինանսավորումը կազմել է գումարի 20%-ը: Արդյունքում ձեռք են բերվել 21 նոթբուքեր, 2 հեռուստացույց, 10 խոսափող, լուսանկարչական ապարատ և տպիչ:

**8. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ**

Անի համայնքի սոցիալապես անապահով, սահմանափակ կարողություններով, ծնողազուրկ, 6 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին տրամադրվել են դպրոցին անհրաժեշտ պարագաներով 100 փաթեթ: Որում ներառված են եղել կոշիկներ, մարզակոշիկներ, դպրոցական համազգեստ, պայուսակ, գրենական պիտույքներ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 5 մլն. ՀՀ դրամ:

**9. «Առաքելություն Հայաստան» կազմակերպություն**

Անիի համայնքապետարանի և «Առաքելություն Հայաստան» (Mission Armenia) կազմակերպության համագործակցության արդյունքում Անի համայնքի բոլոր բնակավայրերի սոցիալապես անապահով ընտանիքների (միակողմանի ծնողազուրկ,

հինգ և ավելի երեխաներ ունեցող), շուրջ 600 անձի տրամադրվել են ձմեռային վերարկուներ ու տարբեր հագուստներ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է ավելի քան 10 մլն. ՀՀ դրամ

**10. 2026 թվականի համար ձեռք բերված պայմանավորվածություններ**

**«Դեպի Հայք»** կազմակերպության հետ ձեռք է բերվել համաձայնություն՝ Անի համայնքի Գուսանագյուղ և Իսահակյան բնակավայրերի վարչական շենքերի, Մարալիկի մարզադպրոցի 3 խմբասենյակների վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

Բարձր գնահատելով մեր արդյունավետ համագործակցության փորձը, վստահության մթնոլորտը և բարձր պատասխանատվությունը, 2026 թվականին վերոնշյալ բոլոր կազմակերպությունների հետ փոխգործակցությունը կլինի շարունակական: Նախատեսվում է իրականացնել տարբեր ծրագրեր՝ ի շահ մեր համայնքի զարգացման և բարօրության:

Համայնքը մեծ հաջողություններ գրանցել նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում:

2025 թվականի ընթացքում Անի համայնքի «Անի համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզիկները մասնակցել են Աշխարհի, Եվրոպայի, Հայաստանի պաշտոնական առաջնություններին և նվաճել մեդալներ: Աշխարհի և Եվրոպայի առաջնություններում մարզիկները նվաճել են 2 մեդալներ՝ արծաթե և բրոնզե՝ սամբո և մարտական սամբո մարզաձևերից: Հայաստանի պաշտոնական առաջնություններում մեր մարզիկները նվաճել են 5 ոսկե, 16 արծաթե և բրոնզե մեդալներ, իսկ Միջազգային մրցաշարերում՝ 17 մեդալներ:

2026 թվականի նախաշեմին, լավատեսությամբ և աշխատասիրությամբ զինված, վստահ ենք, որ անելու ենք առավելագույնը, որպեսզի կարողանանք իրականացնել 2026 թվականի ընթացքում նախատեսված բոլոր ծրագրերը: Եվ թող գալիք տարին լինի նպատակների իրականացման և խաղաղության տարի:

Այսօր՝ տարեմուտի շեմին, չպետք է մոռանանք ու հերթական անգամ մեր հարգանքի տուրքը մատուցենք մեր բոլոր այն հայորդիների հիշատակին, ովքեր իրենց կյանքը նվիրաբերեցին մեր երկրի խաղաղության, մեր ժողովրդի վաղվա օրվա ու հայրենիքի բարօրության համար:

Եզրափակելով՝ մաղթում ենք, որ 2026 թվականը խաղաղություն և կայունություն բերի մեր երկրին, զարգացում ու առաջխաղացում՝ մեր համայնքին, երջանկություն, սեր ու համերաշխություն՝ բոլորիս ընտանիքներին:

Շնորհավո՜ր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

***Օրակարգ-4***

**4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 181-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ժ. ԱԼԵՔՅԱՆ
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Մ. ԱՍԼԱՆՅԱՆ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ
Գ. ՊՈՂՈՍՅԱՆ
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
Մ. ԵՆՈՔՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 163-Ն)*

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու 2025 թվականի
դեկտեմբերի 25-ի թիվ N 163-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 181-Ն որոշման N N 1-3 հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Համայնքի բյուջեի եկամտային մասի 7332 (Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (Սուբվենցիաներ) տողի «69182.5» թիվը փոխարինել «297165.7» թվով:
2. Համայնքի բյուջեի եկամտային մասի 7452 (Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ) տողի «3761.0» թիվը փոխարինել « 3798.7» թվով:
3. Համայնքի բյուջեի եկամտային մասի 7452 (Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ) տողի «184273,0» թիվը փոխարինել « 184163,3» թվով:
4. Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 02, դաս 01 (Գյուղատնտեսություն) և տնտեսագիտական դասակարգման 4729 (Այլ նպաստներ բյուջեից) հոդվածի «184273,0» թիվը փոխարինել «184163.3» թվով:
5. Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 05, դաս 01 (Սուբվեն Ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի «0» թիվը փոխարինել «181112.1» թվով, 5134 (Նախագծահետազոտական ծախսեր) հոդվածի «0» թիվը փոխարինել «1932.8» թվով:
6. Գործառական դասակարգման բաժին 06 խումբ 03, դաս 01 (Սուբվեն Ջրամատակարարում) և տնտեսագիտական դասակարգման 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի «81082.1» թիվը փոխարինել «101408,7» թվով:
7. Գործառական դասակարգման բաժին 06. խումբ 01, դաս 01 (Սուբվեն Բնակարանային շինարարություն) և տնտեսագիտական դասակարգման 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածի «0» թիվը փոխարինել «24124.0» թվով, 5134 (Նախագծահետազոտական ծախսեր) հոդվածի «0» թիվը փոխարինել «487.7» թվով:
8. Գործառական դասակարգման բաժին 09. խումբ 01, դաս 01 (Նախադպրոցական կրթություն) և տնտեսագիտական դասակարգման 4511 (Սուբսիդիաներ ոչ ֆինանսական

պետական (համայնքային) կազմակերպություններին) հոդվածի «122303.6» թիվը փոխարինել «122341.3» թվով:

Եզրափակիչ խոսքով հանդես եկավավ համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանը

Տարին ամփոփելու կապակցությամբ տեղեկացվեց, որ ընթացիկ տարում համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ հրավիրվել և անցկացվել է համայնքի ավագանու 12 նիստ, որից 8-ը հերթական և 4-ը արտահերթ: <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով համայնքի ավագանուն վերապահված լիազորությունների շրջանակում ընդունվել են 163 որոշումներ և երկու ուղերձ:

Քննարկումների ընթացքում ավագանու անդամների կողմից հանդես է բերվել բարձր ակտիվություն, ներկայացվել են կառուցողական առաջարկություններ և դիտարկումներ:

Ավագանու նիստերում քննարկվել են՝

- համայնքի կայուն զարգացման,
- գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման,
- նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման, մշակութային և մարզական կյանքի աշխուժացման, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման,
- համայնքում քաղաքաշինության խթանման,
- համայնքի բնակավայրերի կառուցապատման, բարեկարգման և կանաչապատման,
- գյուղատնտեսության զարգացման խթանման,

ինչպես նաև համայնքի պարտադիր խնդիրներին վերաբերվող մի քանի տասնյակ հարցեր:

Խորին երախտագիտություն հայտնեց ավագանու բոլոր այն անդամներին, ովքեր ակտիվ ներգրավվածություն են ունեցել համայնքի տեղական ինքնակառավարման գործընթացին, ակտիվ մանակցություն են ունեցել անցկացված քննարկումներին, բարեխղճորեն են կատարել ավագանու անդամի օրենքով վերապահված իրենց լիազորություններն և պարտականությունները:

Հարգելի բարեկամներ, հարգելի գործընկերներ, եզրափակելով խոսքս շնորհավորում եմ բոլորիս Ամանորի և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ:

Յուրաքանչյուր Ամանոր նոր մեկնարկի սկիզբ է ազդարարում, ես ցանկանում եմ, որ այդ մեկնարկը բոլորիս համար լինի հաջողակ ու խոստումնալից: Հուսանք, որ 2026 թվականը կլինի հուսո, սիրո և ամենակարևորն է՝ խաղաղության տարի:

Հարգելի գործընկերներ, Անի համայնքի ավագանու նիստի օրակարգի հարցերը սպառված են, նիստը հայտարարում եմ փակված:

Շնորհակալություն նիստի  մասնակցության համար:

---

***ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ***

**ԺԻՐԱՅՐ ԱԼԵՔՅԱՆ** --------------------------

**ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆ** --------------------------

**ՄՈՒՐԱԴ ԱՍԼԱՆՅԱՆ** --------------------------

**ՀԱՍՄԻԿ ՋԱՏԻԿՅԱՆ** --------------------------

**ԳԱԳԻԿ ԹԱԹԵՎՈՍՅԱՆ** --------------------------

**ԳԱԳԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ** --------------------------

**ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆ** --------------------------

**ԷԴԻԿ ՈՒՌՈՒՏՅԱՆ** --------------------------

**ԳԱԳԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ** --------------------------

**ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ** --------------------------

**ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ** --------------------------

**ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆ** --------------------------

*Համայնքի ղեկավար*

**ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ** --------------------------

*Նիստն արձանագրեց*

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԲԱՐՅԱՆ** -----------------------

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am


**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1**

<<25>> դեկտեմբերի 2025 թվական          քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁԸ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի դրույթներով.

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին արձանագրում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու համայնքի բնակչությանը ուղղված ուղերձը՝ ամանորի և սուրբ ծննդյան տոների կապակցությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետով հաստատված ուղերձը հրապարակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի պաշտոնական ինտերնետային կայքում և լրատվության այլ միջոցներով

3. Սույն արձանագրությունը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ՝ 12          դեմ՝          ձեռնպահ՝

ԺԻՐԱՅՐ ԱԼԵՔՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ՄՈՒՐԱԴ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ՁԱՏԻԿՅԱՆ

ԳԱԳԻԿ ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

ԳԱԳԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆ

ԷԴԻԿ ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԱԳԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<25>> դեկտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 25-ի ուղերձի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐՁԸ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Սիրելի՛ անեցիներ, հարգարժան ներկաներ,

Սրտանց շնորհավորում ենք Ձեզ՝ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առիթով: Տոնացույցի մեջ Ամանորն այն եզակի տոներից է, երբ շատերն անկեղծորեն հավատում են հրաշքի և վստահ են, որ այն կարող է իրականանալ:

Տարվա այս ժամանակահատվածը ոչ միայն անցնող տարին ամփոփելու, այլ նաև գալիք տարում համայնքում իրականացվելիք ծրագրերի ու աշխատանքների, այդ թվում բնակավայրերի համաչափ զարգացման կարողություններն ու հնարավորությունները գնահատելու և սպասվող արդյունքները նախանշելու մասին է:

2025 թվականը լի էր դժվարություններով, խոչընդոտներով, միևնույն ժամանակ ձեռքբերումներով և հաղթանակներով:

Մեր հավաքական ուժի, որդեգրած սկզբունքի՝ այն է՝ աշխատանքի նկատմամբ պատասխանատվության ու հետևողականության շնորհիվ ապացուցեցինք, որ միասին կարող ենք լուծել համայնքում ծառացած և հրատապ լուծում պահանջող մի շարք խնդիրներ: Կարճ ժամանակահատվածում իրականացվեցին միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների ու փողոցների հիմնանորոգման, ջրատնտեսական համակարգերի կառուցման, լուսավորության ցանցի ընդլայնման և ենթակառուցվածքների արդիականացման աշխատանքներ: Բարերարների ներդրումներով և համայնքի գործուն աջակցությամբ Մարալիկ քաղաքում կառուցվեց ժամանակակից չափորոշիչներին համապատասխան խաղահրապարակ, քաղաքային հրապարակի հարակից տարածքում տեղադրվեց Բագրատունյաց տոհմի նշանավոր արքա Աշոտ Ողորմածի և թագուհի Խոսրովանույշի քարակերտ արձանները, իսկ Գուսանագյուղ բնակավայրում տեղադրվեց զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձան:

Համայնքի բյուջեի միջոցներով վերանորոգվել և արդիականացվել են համայնքապետարանի, Ձորակապ, Լանջիկ, Գուսանագյուղ, Աղին և Լուսաղբյուր բնակավայրերի վարչական շենքերը, համայնքային ենթակայության երաժշտական, արվեստի, մարզադպրոցի շենքերը, համալրվել են նոր գույքով և հանդերձանքով:

Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվել է Սառնաղբյուր բնակավայր տանող ճանապարհի 1300 գծամետր հատվածի, Սարակապ բնակավայր տանող ճանապարհի 1500 գծամետր հատվածի և Հայկաձոր բնակավայր տանող ճանապարհի 1500 գծամետր հատվածի ասֆալտապատման աշխատանքներ, որի արժեքը կազմել է 402 մլն. 200 հազար ՀՀ դրամ: Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում

ավարտական փուլում է Մարալիկ քաղաքի Հրանտ Շահինյան փողոցի 520 գծամետր հատվածի ասֆալտապատման աշխատանքները, որի արժեքը կազմել է 249,1 մլն ՀՀ դրամ: Պետական ծրագրի շրջանակներում ասֆալտապատվել է Ձիթհանքով-Զարինջա միջբնակավայրային ճանապարհը:

Մարալիկ քաղաքի բնակֆոնդի պահպանման ուղղված ծրագրերի համատեքստում Մարալիկի 2-րդ թաղամասում իրականացվել են 1-ին, 2-րդ, 4-րդ և 6-րդ բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքները, որի արժեքը կազմել է 64 մլն. 231 հազար ՀՀ դրամ:

Սուբվենցիոն ծրագրի շրջանակներում իրականացվել են Մարալիկ քաղաքի Շիրակացի, Կոլտնտեսականների փողոցների, Շիրակացի 1-ին, 2-րդ, Կոլտնտեսականների 3,4,5,6,7-րդ նրբանցքների կոյուղագծերի կառուցման աշխատանքները, որի ընդհանուր երկարությունը կազմում 4300 գծամետր, որի արժեքը կազմել է 104 մլն. 900 հազար ՀՀ դրամ: Ավարտական փուլում են Սարակապ բնակավայրի խմելու ջրի համակարգի կառուցման և Բագրավան բնակավայրից Անիավան և Անիպեմզա բնակավայրերի խմելու ջրատարի կառուցման աշխատանքները, որի ընդհանուր արժեքը կազմում է 98 մլն. 736 հազար ՀՀ դրամ:

Էապես բարելավվել է համայնքում սանմաքրման աշխատանքները, տեղադրվել են նորաոճ աղբամաններ և ընդլայնվել են համայնքի բնակավայրերի աղբահանության ծավալները:

Շնորհիվ Ձեր վստահության, աջակցության և նվիրվածության մենք կարողացանք ևս մեկ քայլով մոտենալ մաքուր և բարեկարգ, առավել ապահով ու հարմարավետ համայնք ունենալու մեր որդեգրած տեսլականին: Համոզված ենք, որ նույն անաչառությամբ և նվիրումով շարունակելու ենք աշխատել 2026 թվականին:

Ուրախությամբ պետք է փաստենք, որ 2026 թվականին հրատապ լուծում պահանջող ծրագրերի իրականացման շրջանակներում ՀՀ կառավարության կողմից Անի համայնքին կհատկացվեն զգալի դրամական միջոցներ, որոնք կնպատակակողղվեն ճանապարհաշինական ոլորտի աշխատանքների իրականացմանը, իսկ համայնք-պետություն համաֆինանսավորմամբ սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար նախատեսվում է կատարել շուրջ 1,5 մլրդ դրամի ներդրում, որի զգալի մասը կուղղվի համայնքում ենթակառուցվածքների զարգացմանը, մշակութային և սպորտային կյանքի ակտիվացմանը:

Պետական ծրագրի շրջանակներում 2025 թվականի գարնանը սկսվել են Անի համայնքի Շիրակավան և Ջրափի բնակավայրերում 288 աշակերտ/տեղ հզորության հանրակրթական նոր դպրոցների, Մարալիկ քաղաքում 150 տեղ հզորության և Քարաբերդ բնակավայրում 50 տեղ հզորության մանկապարտեզների կառուցման աշխատանքները: Նույն ծրագրի շրջանակներում 2026 թվականին կմեկնարկի Սառնաղբյուր բնակավայրում 567 աշակերտ/տեղ հզորության հանրակրթական նոր դպրոցի կառուցումը:

Պետական ծրագրի շրջանակներում 2026 թվականին նախատեսվում է վերանորոգել Մարալիկի ֆուտբոլի մարզադաշտը, Մարալիկի մշակույթի տունը, Մարալիկի թիվ 1 հանրակրթական դպրոցը, Բագրավանի հանրակրթական դպրոցը, Սառնաղբյուրի

մանկապարտեզը, իսկ Ձորակապի միջնակարգ դպրոցի համար կկառուցվի նոր մարզադահլիճ:

**Սուբվենցիոն ծրագրի շրջանակներում 2026 թվականին կասֆալտապատվեն՝**

- Ձիթհանքով բնակավայրի ներբնակավայրային 3-րդ փողոցի 700գծ. մետր երկարության հատվածը.
- Մարալիկ քաղաքի ներբնակավայրային Երիտասարդական փողոցի 762 գծ. մետր երկարության հատվածը.
- Լանջիկ բնակավայր մտնող կենտրոնական 1-ին և 2-րդ փողոցների 1348 գծ. մետր երկարության հատվածը.
- Սառնաղբյուր բնակավայր տանող ճանապարհի 1024 գծ. մետր հատվածը և ներբնակավայրային թիվ 9 փողոցի 796 գծ. մետր հատվածը.
- Շիրակավան բնակավայր մտնող ճանապարհի 461 գծ. մետր երկարության հատվածը:

Համայնքապետարանը նախաձեռնել է նաև պետական ծրագրի շրջանակներում ՀՀ Շիրակի մարզի <<Ղազանչի>> կոչվող ջրաղբյուրից Անի համայնքի սահմանամերձ գոտու 10 բնակավայրերի համար /Շիրակավան-Անիպեմզա/ ինքնահոս եղանակով խմելու ջրի նոր ջրատարի կառուցման գործընթաց:

Համայնքապետարանը նախաձեռնել է նաև բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի բարեկարգման, լուսավորության համակարգերի ընդլայնման, կանաչապատ տարածքների և հանգստի նոր գոտիների հիմնման գործընթացներ:

**Անիի համայնքապետարանը ակտիվ համագործակցել է նաև միջազգային գործընկերների ու տարբեր հասարակական բարեգործական կազմակերպությունների հետ, նրանց կողմից իրականացվել են մի շարք ներդրումային ծրագրեր, դրանք են՝**

**1. ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր (ՊՀԾ)**

Ծրագրի միջոցով ինտենսիվ մրգատու այգիներ են հիմնվել Մարալիկի թիվ 1, Գուսանագյուղի և Քարաբերդի հանրակրթական դպրոցների բակային տարածքներում:

**2. «ԴԻԱԿՈՆԻԱ» բարեգործական կազմակերպություն՝**

- Համայնքի սոցիալապես անապահով 1000 ընտանիքներ ստացել են 25 կգ-ոց սննդի փաթեթներ.
- Համայնքի 3-16 տարեկան 270 երեխաներ և պատանիներ ստացել են տաք հագուստ.
- Համայնքի 400 ընտանիքներ ստացել են վառելափայտ.

**2. <<IWAY>> միջազգային կազմակերպություն՝**

Մարալիկ քաղաքում իրականացվող «Շարժական երիտասարդական աշխատանք» ծրագրի երիտասարդներին նվիրվել են 20 աթոռ, 5 սեղան, լուսանկարչական ապարատ, պրոյեկտոր, որի ընդհանուր արժեքը կամզել է 1 մլն. ՀՀ դրամ:

**3. «Դեպի Հայք» կազմակերպություն.**

Համագործակցության արդյունքում կազմակերպությունը համայնքապետարանի համաֆինանսավորմամբ վերանորոգել է Մարալիկի Արվեստի դպրոցի դասասենյակները, որի ընդհանուր արժեքը կազմել է 5. մլն. ՀՀ դրամ.

**4. «Հայ Դպրոց» հիմնադրամ.**

Ծրագրի շրջանակում Մարալիկի Արվեստի դպրոցին հատկացվել է 20 դասասեղան, 30 աթոռ, 10 պահարան, 7 ուսուցչական սեղան և 3 գրատախտակ:

Մարալիկի թիվ 2 միջնակարգ դպրոցին հատկացվել է 13 գրատախտակ, 13 ուսուցչական սեղան և աթոռներ:

**5. <<ՇԵՆ>> բարեգործական կազմակերպություն և Ֆրանսիական «ԱՅՕ» կազմակերպություն.**

Համագործակցության արդյունքում վերանորոգվել է Ջրափիի մշակույթի տանը տեղակայված նկարչական խմբակի սենյակները, որի ընդհանուր արժեքը կազմել է 5 մլն ՀՀ դրամ. իսկ Անիի համայնքապետարանի համաֆինանսավորումը կազմել է ծրագրի արժեքի 20%-ը:

**6. <<ԷՅ ԹԻ ՓԻ>> բարեգործական հիմնադրամ**

Համագործակցության արդյունքում ձեռք է բերել շուրջ 2000 ծառ և տնկի:

**7. ՄԱԶԾ «Կանայք քաղաքականության, հանրային կառավարման և քաղաքացիական հասարակության մեջ»**

Ծրագրի շրջանակներում հայտարարված դրամաշնորհային մրցույթին, Անի համայնքի ղեկավարին կից Կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի անդամների կողմից ներկայացվել է «Բնակիչների մասնակցության խթանումը էլեկտրոնային կառավարման միջոցով» ծրագիրը, որի ընդհանուր արժեքը կազմել է 10 000 €: Անիի համայնքապետարանի ֆինանսավորումը կազմել է գումարի 20%-ը: Արդյունքում ձեռք են բերվել 21 նոթբուքեր, 2 հեռուստացույց, 10 խոսափող, լուսանկարչական ապարատ և տպիչ:

**8. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ**

Անի համայնքի սոցիալապես անապահով, սահմանափակ կարողություններով, ծնողազուրկ, 6 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին տրամադրվել են դպրոցին անհրաժեշտ պարագաներով 100 փաթեթ: Որում ներառված են եղել կոշիկներ, մարզակոշիկներ, դպրոցական համազգեստ, պայուսակ, գրենական պիտույքներ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 5 մլն. ՀՀ դրամ:

**9. «Առաքելություն Հայաստան» կազմակերպություն**

Անիի համայնքապետարանի և «Առաքելություն Հայաստան» (Mission Armenia) կազմակերպության համագործակցության արդյունքում Անի համայնքի բոլոր

բնակավայրերի սոցիալապես անապահով ընտանիքների (միակողմանի ծնողազուրկ, հինգ և ավելի երեխաներ ունեցող), շուրջ 600 անձի տրամադրվել են ձմեռային վերարկուներ ու տարբեր հագուստներ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է ավելի քան 10 մլն. ՀՀ դրամ

**10. 2026 թվականի համար ձեռք բերված պայմանավորվածություններ**

**«Դեպի Հայք»** կազմակերպության հետ ձեռք է բերվել համաձայնություն՝ Անի համայնքի Գուսանագյուղ և Իսահակյան բնակավայրերի վարչական շենքերի, Մարալիկի մարզադպրոցի 3 խմբասենյակների վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

Բարձր գնահատելով մեր արդյունավետ համագործակցության փորձը, վստահության մթնոլորտը և բարձր պատասխանատվությունը, 2026 թվականին վերոնշյալ բոլոր կազմակերպությունների հետ փոխգործակցությունը կլինի շարունակական: Նախատեսվում է իրականացնել տարբեր ծրագրեր՝ ի շահ մեր համայնքի զարգացման և բարօրության:

Համայնքը մեծ հաջողություններ գրանցել նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում:

2025 թվականի ընթացքում Անի համայնքի «Անի համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզիկները մասնակցել են Աշխարհի, Եվրոպայի, Հայաստանի պաշտոնական առաջնություններին և նվաճել մեդալներ: Աշխարհի և Եվրոպայի առաջնություններում մարզիկները նվաճել են 2 մեդալներ՝ արծաթե և բրոնզե՝ սամբո և մարտական սամբո մարզաձևերից: Հայաստանի պաշտոնական առաջնություններում մեր մարզիկները նվաճել են 5 ոսկե, 16 արծաթե և բրոնզե մեդալներ, իսկ Միջազգային մրցաշարերում՝ 17 մեդալներ:

2026 թվականի նախաշեմին, լավատեսությամբ և աշխատասիրությամբ զինված, վստահ ենք, որ անելու ենք առավելագույնը, որպեսզի կարողանանք իրականացնել 2026 թվականի ընթացքում նախատեսված բոլոր ծրագրերը: Եվ թող գալիք տարին լինի նպատակների իրականացման և խաղաղության տարի:

Այսօր՝ տարեմուտի շեմին, չպետք է մոռանանք ու հերթական անգամ մեր հարգանքի տուրքը մատուցենք մեր բոլոր այն հայորդիների հիշատակին, ովքեր իրենց կյանքը նվիրաբերեցին մեր երկրի խաղաղության, մեր ժողովրդի վաղվա օրվա ու հայրենիքի բարօրության համար:

Եզրափակելով՝ մաղթում ենք, որ 2026 թվականը խաղաղություն և կայունություն բերի մեր երկրին, զարգացում ու առաջխաղացում՝ մեր համայնքին, երջանկություն, սեր ու համերաշխություն՝ բոլորիս ընտանիքներին:

Շնորհավո՛ր Ամանոր և Սուրբ Ծնունդ: